

* *
*«Մի՛ գնահատե՛ք մարդկանց մօտ—գնահատե՛ք
գազանների մօտ»:

Ֆր. Նիլսեն:

Բազեքը վայրի թռան շուարած.—
Ո՛վ է արշաւում մօայլ գիշերով.
Մըըրկի նման նոյգիւն հեծած՝
Ո՛վ է սլանում նիրհած դաշտերով:

Թռնիմ խոր երկինք, դէպ աստղերն անշէջ
եւ սիրտս բանամ անհունութեան դէմ.
Ա՛խ, սուգուել կուգեմ գոռ ամպերի մէջ
եւ կայծակներով զարնուիլ կուգեմ:

Գծուծ ու նանիր մարդկանցից հեռւ,
Վախկոտ, նենգամիտ, կեղծ ու դաւաճան.
Ստոր ու ստորակ աշխարհից հեռւ,
Նիւթին միշտ գերի, ագահ ստութեան:

Աշխարհը չարժէ քու արտասուքին
եւ կի՛նն ու ընկեր՝ գգուանքիդ այդ ծով.—
Անապատ գնահատե՛ք—սիրիւ վագրերին,
եւ այրուի՛ր անմահ արեւի սիրով...

Ա. Խսահակեան